# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007 Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑՈՎ «ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ռ. ԹՈՐՈՍՅԱՆԻ՝ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՐԱԿԻՑ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԿՈՂՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

Մերժել ՀՀ սահմանադրական դատարանում «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչ Ռ. Թորոսյանի՝ ՀՀ արդարադատության նախարարությանը որպես հարակից պատասխանող կողմի կարգավիճակից զրկելու մասին միջնորդությունը, նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007 թ. մայիսի 29-ի ՍԴԱՈ-70 աշխատակարգային որոշման 5-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքերով, սույն գործով՝ իր իրավասությունների հետ կապված հարցերով, որպես հարակից պատասխանող է ներգրավել ՀՀ արդարադատության նախարարությանը և գտնում է, որ այդ որոշումը վերանայելու հիմքեր չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

02 հունիսի 2007 թ.
ՍԴԱՈ - 76